ՎԻՔԻՊԵԴԻԱ
Ազատ հանրագիտարան

# Զարեհ

Վիքիպեդիայից՝ ազատ հանրագիտարանից

| Զարեհ | |
|---|---|
| Ծոփքի Արքա | |
|  | |
| Իշխանություն | Մ.թ.ա. 190–մ.թ.ա. 175 |
| Ծնվել է՝ | մ.թ.ա. 3-րդ դար |
| Մահացել է՝ | մ. թ. ա. 188 Ծոփք |
| Նախորդ | Աբդիսարես |
| Տոհմ | Երվանդունիներ թագավոր |
| Հայր | Շավարշ |

**Զարեհ** (Զահրատ, Դարեհ; հունարեն՝ Ζαριαδρης, ծննդյան և մահվան թթ. անհտ.), Ծոփքի ստրատեգոս-կառավարիչ՝ մ.թ.ա. 202-ից, թագավոր՝ մ.թ.ա. 190-մ.թ.ա. 175-ին: Սերել է, հավանաբար, Ծոփք-Կոմմագենեի Երվանդունի արքայատոհմից: Հաջորդել է Ծոփքի Շավարշ-Քսերքսես թագավորին: Սելևկյան Անտիոքոս III Մեծ թագավորը մ.թ.ա. 3-րդ դարի վերջին նվաճելով Երվանդյան Հայաստանի տիրույթների զգալի մասը Կոմմագենեում, Ծոփքում և Մեծ Հայքում, Ծոփքի ստրատեգոս-կառավարիչ է կարգել Զարեհին: Հռոմի դեմ Մագնեսիայի ճակատամարտում (մ.թ.ա. 190) Անտիոքոսի պարտությունից հետո Զարեհը ապստամբել և Ծոփքը հռչակել է անկախ թագավորություն՝ դաշնակցային հարաբերություններ հաստատելով Մեծ Հայքի թագավոր Արտաշես Ա-ի հետ: Զարեհը մասամբ իր թագավորությանն է միավորել Սելևկյանների միջամտությամբ տրոհված հայկական մերձեփրատյան հողերը: Զարեհի անունով և պատկերով հատվել է դրամ:

| | |
|---|---|
| Թեմատիկ կայքեր | Rodovid (http://ru.rodovid.org/wk/Person:600382) |
| Բառարաններ և հանրագիտարաններ | Բրիտանիկա (օնլայն) (https://www.britannica.com/biography/Zariadres) · Բրոքհաուսի և Եփրոնի |
| Զանգվածային վերահսկողություն | SUDOC: 135381886 (http://www.idref.fr/135381886) · VIAF: 196221115 (http://viaf.org/viaf/196221115) · WorldCat VIAF: 196221115 (https://www.worldcat.org/identities/containsVIAFID/196221115) |

*Այս հոդվածի կամ նրա բաժնի որոշակի հատվածի սկզբնական կամ ներկայիս տարբերակը վերցված է Քրիեյթիվ Քոմմոնս Նսաւմ–Համանման տարածում 3.0 (Creative Commons BY-SA 3.0) ազատ թույլատրագրով թողարկված Հայկական սովետական հանրագիտարանից (հ. 3, էջ 667):* CC BY-SA

Զարեհ — նախնիներ [Բացել]

Ստացված է «https://hy.wikipedia.org/w/index.php?title=Զարեհ&oldid=8618725» էջից